ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունները անձի «Ես» կառուցվածքում» ԺԹ.00.01 «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշխարհում զինված հակամարտությունների և այլ արտակարգ իրավիճակների արդյունքում որպես հետևանք, առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջին հերթին առնչվում են դրանց անմիջական մասնակիցների, ինչպես նաև երկրի տնտեսական, քաղաքական, առողջապահական և այլ համակարգերի գործունեության արդյունավետության վրա: Հանգամանքների բերումով ՀՀ անկախացման տարիներից ի վեր գտնվում է արտաքին և ներքին գործոնների ճնշման ազդեցությամբ առաջացած մեծ ու փոքր տնտեսական, ռազմական, սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների ծանրաբեռնվածության ներքո: Դրանցում թերևս իր ամենահուժկու ազդեցությունն ու անդառնալի մարդկային և նյութական կորուստներով զուգակցվող հետևանքներն ունեցան վերջին տասնամյակների ընթացքում մեր ժողովրդին պարտադրված երկու պատերազմները: Հարկ է նշել, որ բացի առանձին հոդվածներից ու մեկ երկու գիտական հետազոտություններից, պատերազմի ազդեցության, մարդկանց հետպատերազմական վնասվածքային վիճակների հիմնախնդիրը ՀՀ լիարժեք ուսումնասիրված չէ: Սթրեսածին գործոնների շարքում պատերազմը մարդկանց օրգանիզմի, հոգեկանի վրա իր թողած հետևանքների առումով հանդիսանում է գերհզոր, բազմագործոն երևույթ, որը մարդկանց օրգանիզմում առաջացնում է բացասական հուզական կայուն ֆոն: Դիտարկվող այդպիսի երևույթները մասնագետների կողմից որակվում են որպես հետվնասվածքային սթրեսային խանգարումներ ՀՎՍԽ (PTSD): ՀՎՍԽ այդպիսի երևույթները ուղեկցվող կանխարգելիչ, վերահսկող աշխատանքների բացակայության պայմաններում որպես օրինաչափություն, վերափոխվում են մարմնական, նյարդային հիվանդությունների: Այս տեսանկյունից հիմնախնդրի ուսումնասիրումը արդիական է, իսկ ընդհանուր և

հոգեկան առողջության կանխարգելման և պահպանման շրջանակներում այն դառնում է ռազմավարական շատ կարևոր խնդիր:

Հիմնախնդրի ուսումնասիրության արդիականությունը կարևորվում է նաև նրանով, որ պատերազմական ժամանակներում, նաև դրանից հետո առաջանում են բազմաթիվ խնդիրներ,որոնք հոգեբանական առումով լիարժեք ուսումնասիրված չեն, ուստի հիմնախնդրի հետագա ուսումնասիրությունները հոգեբանական գիտության համար, ինչպես նաև կիրառական տեսանկյունից կարող են գիտական նոր մշակումների, խնդիրների լուծման նոր մոտեցումների կարևոր հենք հանդիսանալ:

Գրախոսվող աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, 213 անուն հայրենական և օտարալեզու գրականության ցանկից, մեթոդական հանձնարարականներից, 4 հավելվածներից, ինչպես նաև գործնական աշխատանքների իրականացման համար մեթոդական առաջարկությունների և հանձնարարականների համալիրից:

Ներածական բաժնում ներկայացված են ատենախոսական աշխատանքի կառուցվածքային և բովանդակային կողմերը ներկայացնող հիմնական պահանջները: Աշխատանքի մեթոդոլոգիական հիմքում դրված են անձի ամբողջականության, համակարգայնության, հոգեկան երևույթների առաջացման և զարգացման պատճառ-հետևանքային սկզբունքները, տեսական աղբյուրների մշակման և վերլուծման աստիճանականության և հետևողականության գիտական մոտեցումները: Հետազոտության հիմնական դրույթները ձևակերպված են հստակ և գրագետ գիտական լեզվով: Աշխատանքում առաջադրված գիտական վարկածը, նպատակն ու խնդիրները, իրենց լուծումներով արտացոլված են աշխատանքի տեսական և հետազոտական գլուխներում, որոնց արդյունքները տրամաբանական եզրակացություններով տեղ են գտնում յուրաքանչյուր կոնկրետ խնդրի լուծման ամփոփիչ բովանդակության մեջ: Հետազոտության մեթոդներն ու աշխատանքների կազմակերպման ռազմավարությունը ապահովում է հետազոտության արդյունավետ ընթացքի ապահովմանը, ինչը ամրապնդվում է հետազոտության արդյունքների մաթեմատիկական վիճակագրական մեթոդների ճիշտ ընտրությամբ և ստացված արդյունքների վերլուծությամբ:

Հաշվի առնելով հիմնախնդրի կարևորությունն ու հետազոտության մեջ ընդգրկված համակազմի յուրահատկությունները, ինչպես նաև աշխատանքում առաջացող իրական և հավանական դժվարությունները ատենախոսության հեղինակը՝ Լիլիթ Սարգսյանը ցուցաբերել է հետազոտական և գործնական աշխատանքների իրականացման համալիր մոտեցում, որոնցում հնարավորինս ապահովել են հավանական վրիպումներն ու բացթողումները:

Ատենախոսության առաջին՝ «Հետվնասվածքային սթրեսը որպես գիտական քննարկման հիմնախնդիր» գլուխը նվիրված է հիմնախնդրի տեսական վերլուծությանը, որտեղ հանգամանալից քննարկվել է «վնասսվածքի», «վնասվածքային սթրեսի» և «հետվնասվածքային սթրեսի» փոխհարաբերակցությունը, ներկայացված են հետվնասվածքային սթրեսի հիմնական ախտանշանները: Տարբեր հեղինակների տեսությունների համեմատությունների ու վերլուծությունների շնորհիվ վեր են հանվել ՀՎՍԽ (PTSD)ի հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, վարքային փոփոխությունների յուրահատուկ առանձնահատկությունները, պատերազմական և արտակարգ իրավիճակներում անձի ամբողջականության պահպանման մեխանիզմները: Առանձին նկարների, սխեմաների ու աղյուսակների տեսքով ներկայացրել է առաջավոր գիտնականների հետազոտությունները, տվել դրանց վերլուծությունները և դրանց կարևորությունը իր կողմից առաջադրված խնդիրների լուծման ուղղությամբ ապահովել դրանց տեսական հիմնավորումները:

Ատենխաոսության երկրորդ՝ «Անձի ես կառուցվածքի հոգեբանական վերլուծությունը» գլխում հեղինակը քննարկում է անձի «Ես կոնցեպցիայի» վերաբերյալ հայրենական և արտասահմանյան գիտնականների արժեքավոր հայացքները, հիմնահարցի վերաբերյալ նրանց ընդհանուր պատկերացումները: Մանրամասն վերլուծությունների ու քննարկումների ձևով ներկայացնում է անձի տարբեր համակարգերում վնասվածքային սթրեսի ազդեցության, դրանց փոխակերպումների ու անձի «Ես» կառուցվածքում տեղի ունեցող յուրահատուկ փոփոխությունները (նյարդային, մարմնական, օրգանական, հենաշարժական, կոգնիտիվ, կառավարման և այլ համակարգերում):

Տեսական վերլուծությունների հենքի վրա կառուցվել են աշխատանքի հետազոտական խնդիրներն ու նպատակը, հետագայում՝ ստացված արդյունքների վերլուծության շնորհիվ մշակվել են կանխարգելման և վերականգնողական աշխատանքների կառուցման ճշգրիտ ռազմավարությունը:

Ատենախոսության երրորդ՝ «Անհայտ կորածների հարազատների հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկությունների և անձի «ես» կառուցվածքի փոփոխությունների հետազոտումը» հիմնական գլխում ներկայացված է վնասվածքի ազդեցությամբ «անձի Ես կառուցվածքի» և դրա բազադրիչների հոգեֆիզիոլոգիական բնութագրերի գործառնական փոփոխությունների հետազոտման գործընթացները: Հետազոտության արդյունքում բացահայտվել են զոհված և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների վրա անդրադարձող բացասական գործոնների բազմազանությունը, խմբային, տարիքային ու սեռային տարբերությունները, դրանց գենեզիսային բնույթը, կորստի նկատմամբ երեխաների, կանանց և ծնողների հուզական ապրումների, երևույթի ժամանակի մեջ արժեվորման, և դրա նկատմամբ ունեցած վերաբերմունքի առանձնահատկությունները: Մեծահասակների՝ ծնողների ու կանանց խմբերում ուսումնասիրվել են գիշերային քնի, դրա բնութագրիերի, երազների, երազների սցենարների բազմազանությունը: Ուսումնասիրությունների այս ֆոնին ճիշտ ընտրված հետազոտական մեթոդների մարտկոցի օգնությամբ ուսումնասիրվել են ատենախոսության հիմքում դրված մի շարք կարևոր խնդիրներ: Մասնավորապես հետազոտվել են.

1. Հետազոտվել են տարբեր հետազոտոկան խմբերում ընդգրկված մարդկանց վրա ազդող բացասական գործոնները, ազդեցության սոցիալ-հոգեբանական, կենսաբանական բնույթը, դրանց նկատմամբ մարդկանց ունեցած վերաբերմունքը և այլն:
2. Ուսումնասիրվել են հետվնասվածքային սթրես կրող անձանց վնասվածքային փորձի համակարգում, հոգեբանական յուրահատուկ փոփոխությունները:
3. Հետազոտվել են անձի «Ես» կառուցվածքի առանձին բաղադրամասերի փոփոխության յուրահատկությունները:
4. Հետազոտվել են անձի դրդապատճառների, արժեհամակարգության,

հուզակամային, կոգնիտիվ, զգայաշարժական համակարգությունների, տիպաբանական առանձնահատկությունների բազմազանությունն ու դրանց առանձնահատկությունները:

Հետազոտությունների արդյունքները արտացոլվում են ուղեկցվող աղյուսակներում, գծանկարներում ու հիստագրամներում, որոնք ավելի ակնառու և հասկանալի են դարձնում հետազոտության ընթացքն ու ստացված արդյունքների վերլուծության տրամաբանությունը: Հետազոտության ողջ ընթացքը վնասվածքային եղելությանը շարունակվող հետվնասվածքային վիճակների հետազոտումն է և դրանց ազդեցության բացահայտումը, որպես անձի ամբողջականության այս կամ այն համակարգության վրա թողնված փոփոխություն: Հետազոտության արդյունքների հիման վրա արվել են համապատասխան եզրակացություններ, որոնց բովանդակության հաշվառմամբ մշակվել է ուղեկցվող հոգեբանական աշխատանքների ռազմավարությունը, անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներն ու դրան հաջորդող ռետեստավորման աշխատանքները: Հետազոտությունը ավարտվում է հետազոտական և կիրառական աշխատանքների հիման վրա մշակված առաջարկությունների ու մեթոդական հանձնարարականների բաժնով, որը մեր կարծիքով նմանատիպ աշխատանքների իրականացնան համար կարող է կարևոր ուղեցույց հանդիսանալ մասնակիցների հետ տարվող աշխատանքների արդյունավետության ապահովման համար:

Իրականացված հետազոտությունն իր ձևով ու բովանդակությամբ լիովին համապատասխանում է հոգեբանության բնագավառում գիտական հետազոտություններին ներկայացվող պահանջներին: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունն ապահովված են հետազոտության մեթոդաբանական հիմքերով, վիճակագրական կուռ մեթեդների կիրառմամբ և դրանց արդյունքների գիտական ճշտությամբ: Ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը արտացոլված է նաև սեղմագրում, որոնցում ներկայացվում է հետազոտության գիտական նշանակությունը:

Այդուհանդերձ, ներկայացված ատենախության մեջ առկա են որոշ դիտարկումներ, որոնք ատենախոսի կողմից հավելյալ մեկնաբանման կարիք ունեն: Մասնավորապես՝

1. Անհայտ կորած անձանց ընտանիքի անդամների կամ զոհվածների ընտանիքի անդամների երեխաների հետազոտության արդյունքները չեն հարաբերակցվել հետազոտական մեկ այլ խմբի հետ, ինչն առավել հստակ կհիմնավորեր հիմնական խմբի երեխաների հետվնասվածքային սթրեսային խանգարումների պատճառները: Շատ հաճախ երեխաների մոտ հետբնասվածքային սթրեսային խանգարումների պատճառ կարող են լինել ոչ լիարժեք ընտանիքը (հոր բացակայությունը), որը կարող է հանդիսանալ նաև մանակավարժական բարձիթողության, երեխայի վրա խնդրահարույց ընտանեկան միջավայրի ազդեցության արդյունք:

2. Հետազոտության գիտական նորույթի առաջին կետում նշված է «Կորուստ ունեցող հարազատների օրգանիզմում բացահայտված հոգեմարմանական փոփոխությունները սահմանվել են որպես հոգեբանական վնասվածքի առանձնահատուկ հոգեֆիզիոլոգիական վիճակներ»: Սահմանում ձևակերպելու համար նպատակահարմար կլիներ կատարել լրացուցիչ ուսումնասիրություն, ինչպես նաև մնացած բոլոր այլ պատճառները (օրինակ՝ խրոնիկ հիվանդությունները, սոմատիկ այլ խնդիրները, էկզոգեն գործոնները, ամբուլատոր քարտեր) բացառելու համար անհրաժեշտ էր նաև ուսումնասիրել տվյալ անձանց հիվանդության քարտերը:

3. Աշխատանքում առկա են հղումների անճշտություններ, տեխնիկական թերություններ՝ էջադրումների հետ կապված:

4. Օգտագործված գրականության ցանկում՝ 210-ից ավել աղբյուրներում, վերջին տաս տարվա նոր գրականությունը սակավ է ներկայացված. ընդամենը առկա է 2-3 աղբյուր:

Սակայն, վերոնշյալ թերությունները չեն ստվերում աշխատանքը և Լիլիթ Խաչատուրի Սարգսյանի «Հետվնասվածքային սթրեսի դրսևորման առանձնահատկություններն անձի Ես-ի կառուցվածքում» ԺԹ.00.01- «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն, համալիր գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԿՊԱ ռեկտոր

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Բ. Լոքյան

Ա.Բ. Լոքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԿՊԱ գիտական քարտուղար Ս. Հ. Պողոսյան

«31» մայիսի 2021 թ.